



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«27» 03 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 029 - 24

Ձեռնարկողը՝

«Պրոֆ-Ալ» ՍՊԸ
Քաղաք Երևան, Սևանի 86/2

Գործունեությունը՝

Նաիրի համայնքի Երևանյան խճուղի 125/1 հասցեում
նախատեսվող այլումինե և ապակե
կոնստրուկցիաների գործարանի կառուցման շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ №

«27» Մարտի 2024թ.

Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Երևանյան խճուղի 125/1 հասցեում նախատեսվող
այլումինե և ապակե կոնստրուկցիաների գործարանի կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝

«Պրոֆ-Ալ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
/Բ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Կոտայքի մարզ, Նաիրի համայնք,
Երևանյան խճուղի 125/1

Ներածական մաս. Այլումինե և ապակե կոնստրուկցիաների գործարանը նախատեսվում է կառուցել Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Երևանյան խճուղի 125/1 հասցեում: Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով հագեցած այլումինե և ապակե կոնստրուկցիաների գործարան:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի բ. ենթակետի, հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախագծի համար հիմք են հանդիսացել Կոտայքի մարզի Նաիրի համայնքի կողմից 2023 թվականի օգոստոսի 25-ին տրամադրված NCPPO-0000-8162 նախագծման թույլտվությունն ու 07-004-0541-0053 կադաստրային ծածկագրով սեփականության վկայականը:

Նախագծով նախատեսվում է կառուցել 7 մասնաշենքից բաղկացած գործարանային համալիր՝ կառուցապատումից ազատ տարածքում: Մասնաշենքերից երկուսն ադմինիստրատիվ և տեխնիկական են, մնացածը արտադրական և պահեստային:



Աղմինիստրատիվ մասնաշենքը նախատեսվում է երկհարկանի, իսկ մնացած մասնաշենքերը միահարկ՝ համապատասխան տեխնոլոգիական հատակագծերի: Կառուցվող գործարանում նախատեսվում է ապակյա կոնստրուկցիաների արտադրություն՝ տարեկան 300.000 քառ. մետր ապակու մշակման արտադրողականությամբ:

Նախագծով նախատեսվում է կառուցել մետաղական կոնստրուկցիաներով, երկաթբետոնե հիմքերով, սենդվիչ պանելներով անգար: Գործարանում նախատեսվում է իրականացնել ապակու կտրում, հղկում, թրծում, լամինացում, ապակեփաթեթի պատրաստում:

Նախագծումն ու շինարարությունն իրականացվելու է երկու փուլով: Առաջին փուլում կկառուցվեն 1-ին, 2-րդ և 7-րդ մասնաշենքերը:

1-ին մասնաշենքն իրենից ներկայացնում է պարզ, ուղղանկյունաձև ուրվագծով, 276,50x36,0 մ առանցքային չափերով, պողպատե հավաքովի հիմնակմախքով շինություն: Բարձրությունը ցածր մասում կազմում է 9500 մմ, իսկ բարձր գագաթնային մասում՝ 12700 մմ: Ջրահեռացումը նախատեսված է կազմակերպված, ներքին ջրհորդանների միջոցով: Բացի հիմնական արտադրական գոտուց, նախատեսված են նաև հանդերձարաններ, սանհագույցներ, ճաշարան և այլ գրասենյակային սենյակներ: Համար 2-րդ մասնաշենքն իրենից ներկայացնում է պարզ, ուղղանկյունաձև ուրվագծով, 172,35x36,0 մ առանցքային չափերով, պողպատե հավաքովի հիմնակմախքով շինություն: Բարձրությունը ցածր մասում կազմում է 9500 մմ, իսկ բարձր գագաթնային մասում՝ 12700մմ: Ջրահեռացումը նախատեսված է կազմակերպված՝ ներքին ջրհորդանների միջոցով: Տեխնիկական №7 մասնաշենքում գործելու են էլեկտրական ենթակայանը, կաթսայատունը, պոմպակայանը և այլ տեխնիկական տարածքները:

Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու են մոտ 23500 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր: Հանվող 19000 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Նաիրի համայնքի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Ըստ հայտում եղած տեղեկատվության՝ տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան: Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ:

Նախատեսվող գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 62128 քմ,

կառուցապատման մակերեսը – 16274 քմ,

կանաչապատման մակերեսը – 31104 քմ,

ճանապարհն ու մայթը – 14750 քմ:

Այլումինե պրոֆիլներն ու ապակու թերթերը ներմուծվելու են մեծ չափերով, այնուհետև ըստ պահանջի կտրվելու են սեղան-հաստոցների օգնությամբ համապատասխան չափերով, որից հետո իրականացվելու է ապակեփաթեթների հավաքման գործընթացն ու ապակեփաթեթը ենթարկվելու է վերջնական հերմետիկացման:

Կառուցապատումից ազատ մնացած տարածքը նախատեսվում է բարեկարգել, կառուցել անհրաժեշտ ճանապարհները և հանգստի գոտի:

Շինաշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:



Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կանաչապատման նախագծի համաձայն տարածքը կանաչապատել և բարեկարգել, իրականացնել սիզամարզի ցանքս, տնկվեն ծառեր և թփեր: Կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 3000 խմ: Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Շինության օդափոխությունը նախատեսված է բնական՝ տանիք բարձրացող օդատարերով: Գործարանային համալիրի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 1080 օր:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Մատակարարումը կկազմակերպվի՝ բացառելով բետոնաջրերի արտահոսքը և բետոնաջրերով շրջակա միջավայրի աղտոտումը: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Շինարարական նյութերից օգտագործվելու են ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավեցման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Շինարարական աղբը, որը կազմում է 150 տոննա, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը՝ 2.5 տոննա կշռով, կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Շահագործման փուլում կառաջանա մոտ 1300 տ ապակու ջարդոն, որը կհանձնվի ապակու ջարդոնի վերամշակմամբ զբաղվող կազմակերպություններին:

Արտադրամասի ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումը կիրականացվի Երևանյան խճուղով անցնող D=200մմ ջրատարից, կոյուղին կհեռացվի տարածքում նախատեսվող սեպտիկ հոր, որից պարբերաբար ասենիզացիոն մեքենաներով կտեղափոխվի կոյուղու դիտահոր: Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Նաիրի քաղաքի ոռոգման ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 7500 կվտ ծախսով, կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, նախատեսվող ենթակայանից, լիցենզավորված կազմակերպության կողմից իրականացված նախագծի համաձայն:

Գազաֆիկացումը կիրականացվի 30խմ/ժամ ծախսով Նաիրի քաղաքի ներքին ցանցից մ/6 ս/գ գազատարից:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները



- Շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացնել փակ ծածկով մեքենաներով.

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,

- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն շինարարական հրապարակին կից անձրևաջրերի նստեցման պարզարան, որտեղ պարզեցված ջուրը մեխանիկական նստեցումից հետո կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

- կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի,

- անվտանգության նկատառումներից ելնելով շինհրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքն արգելող նշաններ և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ,

- անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում:

- շինարարական աշխատանքներում ներգրավել աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող ժամանակակից տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:

- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

Համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ:

- Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ:

- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

- Աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

- Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

- Հարակից տարածքներում իրականացնել կենսաբազմազանության մոնիթորինգ 3 ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 2620000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Կահրի համայնքի Երևանյան խճուղի 125/1 հասցեում նախատեսվող այլումինտ և սալակե



կոնստրուկցիաների գործարանի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի համայնքապետարանում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև քաղաքաշինության կոմիտեն: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմինին:
- Հետիոտնի անվտանգությունն ապահովելու նպատակով շինհրապարակն անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով, մարդկանց անցման հատվածներում անվտանգության նկատառումներով պայմանավորված նախատեսել թիթեղյա ծածկոց:
- Շինարարության ընթացքում շենքերի արտաքին մասն անհրաժեշտ է ծածկել անթափանց թաղանթով:
- Բոլոր տեսակի, այդ թվում արտադրական թափոնների գործածությունն ու տեղափոխումն իրականացնել օրենսդրական պահանջներին համապատասխան:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ՊրոՖ-Ալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Երևանյան խճուղի 125/1 հասցեում նախատեսվող այլումինե և ապակե կոնստրուկցիաների գործարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

